# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միության ԻՆՉ ԱՆԵԼ գիտագործնական սեմինարների շարքի ս.թ. մարտին նախատեսվող *ԿԱՊԻՏԱԼԻ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ* թեմայով հաջորդ փուլի համար հայտարարում է մրցույթ: Հաղթած աշխատության հեղինակը կստանա **200,000 հզ դրամ**, իսկ երկրորդ լավագույն արդյունքը հաղթած աշխատանքի հետ մեկտեղ կտպագրվի ՀԱԳՄ և Անտարես հրատարակչության կողմից հրապարակվող հերթական ժողովածուում:

# ՀԱՅՏԱԴԻՄՈՒՄ

## ԹԵՄԱ: Կապիտալի շուկայի զարգացումը ՀՀ-ում՝ առաջարկի գործոններ

### 1. ՀԻՄՆԱԽՆԴՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ՀՀ-ում կապիտալի շուկան, ի տարբերություն բանկային շուկայի, չունի զարգացվածության այն աստիճանը, որ հնարավորություն ընձեռի առանց ֆինանսական միջնորդների էական գումարներ ներգրավել իրական հատված, դրանով էապես մեծացնելով ֆինանսական ռեսուրսների մատչելիությունը՝ հատկապես միջին ձեռնարկությունների համար: Շուկայի թերզարգացվածության պատճառով (օրինակ, արտահայտված ցուցակված ընկերությունների սակավությամբ)նաև նվազում է ՀՀ տնտեսության մրցացային միջավայրի գնահատականը:

### 2. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Հետազոտության արդյունքները հնարավորություն կտան ավելի հասցեական և թիրախային դարձնել իրական հատվածի կարգավորումները, որոնք թողարկման ներուժ ունեցող ընկերությունների համար մատչելի և գրավիչ կդարձնեն արժեթղթեր թողարկելու և ցուցակվելու գործընթացը:

### 3. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ ԵՎ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Հետազոտության շրջանակներում անհրաժեշտ է գնահատել՝

1) Թողարկելու գրավչության համար անհրաժեշտ տնտեսական, մշակութային նախադրյալները և կառուցվածքային միջոցառումները, և
2) Թողարկելու գրավչության համար անհրաժեշտ հարկային կարգավորումները:

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

## Ակնկալվող արդյունքը

### Առաջադրանք 1. Կառուցվածքային միջոցառումներ

Պետք է գնահատել, արդյոք

1) Տնտեսության զարգացման մակարդակը և առկա կառուցվածքը, տիրապետող գործարար սովորույթները նպաստում են ազատ շրջանառվող բաժնետիրական կապիտալի ձևավորմանը,
2) Առկա մրցակցային, հաշվետվական (օրինակ, աուդիտի) և վարչարարական կարգավորումները ստեղծում են թողարկմանը նպաստող միջավայր:

### Առաջադրանք 2. Հարկաբյուջետային կարգավորում

Պետք է գնահատել, արդյոք թողարկողների նկատմամբ պահանջների տեսակետից ՀՀ-ում առկա կարգավորումները տրամաբանորեն համադրելի են՝

1) Միջազգային լավագույն փորձի հետ, այդ թվում հատկապես ուշադրություն դարձնելով այն երկրների վրա որոնք ունեցել են ըստ էության բացակայող կապիտալի շուկայի կայացման և խրախուսման խնդիր:

## 4. ԼՈԳԻՍՏԻԿԱՆ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Ցանկալի է որ հետազոտությունը պարունակի ոչ միայն ակադեմիական գրականության ամփոփում, օրենսդրության և երկրորդային տվյալների վերլուծություն, այլ և պարունակի գործարարների հետ շփման արդյունքում ձևավորված հարցադրումներ: ՀԱԳՄ-ն կարող է աջակցել հանդիպումների կազմակերպման առումով: Հետազոտության տևողությունը 1 ամիս է:

## 5. ԴԻՄՈՒՄԱՏՈՒԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

### Ովքեր կարող են դիմել

Դիմողը դիմելու պահին և հետազոտության իրականացման ընթացքում պետք է լինի հայաստանյան ցանկացած բարձրագույն ուսումնական հաստատության դասախոս կամ գիտաշխատող:

### Հաղթողի ընտրությունը

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՂՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

Մրցույթի հաղթողն ընտրվում է ՀԱԳՄ և համագործակցող գիտնականների կողմից կազմակերպվող մրցակցային գործընթացի միջոցով: